

ՍՓՅՈՒՌԱՆՆԵՐ ԿՅԱՆՔ ԺԻՅՆԻ ԶԱՐԱԲԵՋՆԻՅՔ ԱՐՄՅԱՆ

1. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ՍՓՅՈՒՐԱՆՆԵՐ

(1962 թ. հունիս — դեկտեմբեր)

Լ. Ի Ր Ա Ն Ա Ն

«Մեր նշանաբանն է հառաջ» թերթը հաղորդում է, որ Բելյուսի «Վահագն Փափագ» թատերախումբը իր նոր թատերաշրջանն սկսեց Գ. Տեր-Գրիգորյանի «Գարնան անձրև» պիեսի բեմադրությամբ: Բելյուսի թատերախումբը ջերմորեն ընդունեցին սովետահայ դրամատուրգի պիեսը, որը բեմադրել է Պերճ Ֆազլյանը:

(«Հառաջ», Բելյուս)

Ֆ Ե Ր Ա Ն Ա Ն

Անցած աշնանը Փարիզում տեղի է ունեցել «Յուժանիտե» թերթի կազմակերպած մեծ դաշտահանդեսը, որին իրենց տաղանդներով մասնակցել են Ֆրանսիայի բոլոր դավաճների և ազգայնականների ներկայացուցիչները: Ֆրանսահայությունը նույնպես ունեցել է իր հատուկ տաղավարը՝ պատրաստված հայ ճարտարապետության ոճով (հեղինակ՝ նկարիչ Համբարձում Պետոյան): Տաղավարում, որ դարձավ մեծ էջերի և հաղթանակի և նրանի համայնապատկերներով, ցուցադրվել են Սովետական Հայաստանում արտադրված զինքներ ու կոշիկներ, ծխախոտ, կոորդինատ, զեղարվեստական իրեր, զրբեր: Գաղտնահանդեսի առթիվ «Աշխարհ» թերթը գրում է. «Հայ ժողովուրդն ու Հայաստանը ճանաչելու, ծանոթացնելու ինչ բացառիկ առիթ: Հարյուր հազարավոր աշխարհիկներու առջև հայկական մշակույթի, հայկական աշխատանքի արտադրանքները ցուցադրելու մեղի համար հաճելի ըլլալն ավելի՛ խաղաղության, բարեկամության, միջազգային եղբայրական կապեր հաստատելու նպատակահամար միջոցը մեր դարձավ»:

(«Աշխարհ», Փարիզ)

Ֆրանսահայ ծաղրանկարիչ Քիրազը (էջման Քիրազյան) մասնակցել է Երզնի ժողովրդական 15-րդ ցուցահանդեսին, որը տեղի է

ունեցել անցյալ տարի Բուսիայում: Իր մի շարք ծաղրանկարների համար նա արժանացել է մրցանակի:

(«Արև», Կահիրե)

Ն ՈՒ Լ Ի Գ Ա Ր Ի Ա

«Նրեան» միության Վառնայի մասնաճյուղի հայկական երգի ու պարի անսամբլը տվեց իր առաջին համերգը, որի ծրագիրը կազմված էր հայկական, բուլղարական ու եվրոպական ժողովրդական ստեղծագործություններից: Անսամբլը իր փորձերն սկսել էր յոթ ամիս առաջ և երկար ու չրտնաջան աշխատանքի շնորհիվ կարողացել էր պատրաստել հետաքրքիր ծրագիր: Անսամբլի երգչախմբի, դորժիքային և պարային խմբերի անդամները երիտասարդ կոմպոզիտոր Արամ Բերբերյանի ղեկավարությամբ աշխատանքից ազատ ժամերը սիրով տրամադրել են փորձերին:

(«Նրեան», Սոֆիա)

Խասկովո քաղաքում (Բուլղարիա) տեղի ունեցավ «Հայ մշակութային տան» շենքի բացումը, որի կառուցմանը սիրով մասնակցել է տեղի հայ բնակչությունը: Շենքի հանդիսավոր բացմանը ներկա են եղել Բուլղարիայի կոմպարտիայի Խասկովոյի շրջանային կոմիտեի ղեկավարները, մամուլի ներկայացուցիչներ: Նրեկոյի գեղարվեստական մասում ելույթ է ունեցել «Նրեան» միության վոկալ խումբը, իսկ հայ աշակերտները բեմադրել են Մ. Թանգաբաջյանի «Որկրամուկ Աշոտիկը» կատակերգությունը:

(«Նրեան», Սոֆիա)

Վերջերս Սոֆիայի Գ. Դիմիտրով սրահում համերգով հանդես եկավ Պլովդիվի հայկական «Ա. Խաչատրյան» երգչախումբը՝ բաղկացած

120 մարդուց: Խումբը ղեկավարում էր Մ. Ժամագործյանը: Հանդիսականները խանդավառությամբ ընդունեցին խմբի կատարած երգերը: Փռնադարձ այցով Պլովդիվում ելույթ ունեցավ նաև Մոֆիայի «Երևան» երգչախումբը:

(«Երևան», Մոֆիա)

Ռ ա լ մ Ի Ե Կ ա

«Նոր կյանք» թերթը տեղեկացնում է, որ Բուխարեստի հեռուստատեսությամբ կադմակերպվել է հաղորդում նվիրված մեծանուն նկարիչ Մարտիրոս Սարյանին: Ցուցադրվել են Մ. Սարյանի մի շարք կտավների վերարտադրությունները:

Նույն օրերին Ռումինիայի ռադիոն հաղորդում է տվել նվիրված Նահապետ Քուչակին: Ռումիններեն լեզվով արտասանվել են Քուչակի բանաստեղծությունները: Թերթը հայտնում է, որ շուտով Քուչակի ժողովածուն լույս կընծայվի Ռումինիայի երիտասարդական հրատարակչության կողմից:

Միաժամանակ ռադիոյով հաղորդվել է Ռախմանինովի «Ալեկո» օպերան, որտեղ ղլխավոր դերերգը կատարել է ՌԺԲ-ի վաստակավոր դերասան Դավիթ Հովհաննիսյանը:

(«Նոր կյանք», Բուխարեստ)

* * *

Վերջերս հունգարացի հայագետ դոկտ. Էդմոնդ Շյուցը, ժամանելով Բուխարեստ, այցելել է «Նոր կյանք» թերթի խմբագրություն: Զրույցի ժամանակ Շյուցը ասել է, որ Բուդապեշտի համալսարանում միջոցներ են ձեռք առնվում հայագիտական կադրեր պատրաստելու ուղղությամբ: Պատասխանելով թերթի աշխատակցի հարցին, հունգար հայագետը ասել է, որ ինքը ղրադվում է հայ-ղփշաղական, ինչպես նաև հայ-հունգարական կապերի հարցնրով:

(«Նոր կյանք», Բուխարեստ)

Ամերիկայի

Միացյալ Նահանգներ

Պենսիլվանիայի համալսարանի միկրոբիոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր Մանասե Անակր մշակել է մի նոր միջոցառում, որով կարելի է պայքարել հակաբիոտիկների նկատմամբ կայուն բակտերիաների դեմ և կանխել նրանց առաջացումը:

Այս հայտնագործությունը ունի չափազանց խոշոր նշանակություն արդի բժշկության հա-

մար, քանի որ քիմիոթերապիայի կիրառման ամենամեծ խոչընդոտներից մեկը տվյալ հակաբիոտիկի նկատմամբ կայուն տեսակների առաջացումն է, որի դեպքում այս դեղանյութերի կիրառումը ոչ մի բարելավ ազդեցություն չի թողնում:

Ամերիկահայ գիտնական հայտնաբերել է, որ երբ պենիցիլինը, ստրեպտոմիցինը և այլ հակաբիոտիկները տրվում են պոլիամինների՝ սպերմինի և սպերմիդինի հետ միասին, ապա կանխվում է միկրոօրգանիզմների՝ տվյալ հակաբիոտիկի հանդեպ կայունացումը, որի պատճառով կիրառված հակաբիոտիկը ամբողջությամբ ոչնչացնում է միկրոբներին:

Եթե այն արդյունքները, որոնք ստացել են լաբորատորիայում կրկնվեն նաև լաբորատորիայից դուրս, բժշկական պրակտիկայում, գալիների մի չափազանց կարևոր ներդրում բժշկության ասպարեզում և խոշոր բարիք կդառնա մարդկությանը:

Ամերիկահայ մտավորական Ն. Շալյանը Հարվարդի համալսարանում անգլերեն լեզվով դասախոսություն է կարդացել «Սասունցի Դավիթ» դյուցազներգության մասին: «Արև» թերթը հայտնում է, որ Շալյանը ավարտել է և շուտով տպագրության կհանձնի Լպոսի անգլերեն թարգմանությունը:

ԱՄՆ-ում Հայ բարեգործական ընդհանուր միության կողմից անգլերեն լեզվով հրատարակվել է Վ. Քյուրբչյանի «Հայոց պատմությունը»: Դա գրքի երրորդ հրատարակությունն է: Նախորդ երկու հրատարակությունները արագ պառլվել էին:

(«Արև», Կահիրե)

* * *

Ինչպես հաղորդում է «Այդ» թերթը, ԱՄՆ-ի Բերկլիի համալսարանում պրոֆ. Պոլ Բասպալյանը կարդացել է դասախոսություններ՝ նվիրված հայոց լեզվին, պատմությանը և մշակույթին:

Նույն թերթը հայտնում է նաև, որ ԳԴԲ-ի «Օրինատալիչ լիտերատուրե ցայտունդ» և Միլանի «Փայիտեյա» հանդեսները իրենց էջերում մնայուն տեղ են հատկացրել ամեն ամիս Հայաստանի հայագետների աշխատություններից մատենագրական նմուշներ և գրախոսականներ հրատարակելուն:

(«Այդ», Բեյրութ)

«Արև» թերթից տեղեկանում ենք, որ դիրի-
ժոր Ֆոն Կարայանի հրավերով Վիեննա է ժա-
մանել ամերիկահայ խմբավար Կարլ Կարա-
պետյանը, որը 1962 թ. մասնակցել է իտալա-
կան երաժշտական մի տոնահանդեսի և շահել
առաջին մրցանակը: Կարապետյանը համերգ-
ներով հանդես է եկել Բեռլինի, Յուրիխի և
այլ քաղաքների սիմֆոնիկ նվագախմբերի հետ:

(«Արև», Կահիրե)

*

Նյու-Յորքի «Քառն Զու» սրահում մեծ
համերգով նշվեց Հայ մշակույթի օրը: Հա-
մերգի ժամանակ ելույթ ունեցան ջութակահար
Վարուժան Քոչյանը, երգիչ Արա Բերբերյանը,
Մեսրոպուհիսեն օպերայի մեներգչուհի Լիլի
Զուգասյանը, որոնք կատարեցին Ալ. Սպեն-
դիարյանի, Ա. Խաչատրյանի, Բրամսի, Ա. Սաթ-
յանի, Ն. Բերբերյանի և այլ կոմպոզիտորների
գործերից: Մի քանի օր անց երգիչ Արա Բեր-
բերյանի ծայր հնչել է Նյու-Յորքի հեռու-
ստանստեղծությունը: Ֆրանսիական, իտալական և
ամերիկյան երգերի հետ միասին Բերբերյանը
կատարել է նաև չորս հայկական երգ:

Հայ մշակույթին նվիրված մեծ առնահան-
դես է կազմակերպվել նաև Լոս-Անժելոսում:
Հայկական երգերի կատարումով հանդես է եկել
Լիլի Քաչյանը: Բեյրութի թատերասեր Սար-
գիս Մուրադյանի ջանքերով բեմադրվել է «Արա
Գեղեցիկ» թատերգությունը:

(«Արարեք», Նյու-Յորք)

Լատինական Ամերիկա

Բուենոս-Այրեսի «Օղեոն» թատրոնի սրա-
հում տեղի ունեցավ «Հայ երաժշտության բա-
րեկամների ընկերության» «Արար» երգչա-
խմբի մեծ համերգը՝ կոմպոզիտոր Փան Ալ-
մուխյանի ղեկավարությամբ: Կատարվեցին հայ
և արգենտինացի կոմպոզիտորների գործերը:
Երգչախումբը հասել է կատարողական բարձր
վարպետության: Արգենտինայի Լուսավորության
մինիստրությունը «Արար» երգչախումբը հրա-
վիրել է երկրի մի շարք քաղաքներում համերգ-
ներ տալու:

(«Սևան», Բուենոս-Այրես)

*

Մարտի 1-ին մայրաքաղաքի պետական թատ-
րոնի սրահում տեղի ունեցավ հայկական երգի
ու պարի մեծ տոնահանդես՝ նվիրված Մեսրոպ
Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին և հայ մշա-

կույթի ամսվան: Համերգին մասնակցել են 5—
14 տարեկան մանուկների 10 պատանիների
պարային խմբերը, «Գայանե» պարախումբը,
Բուենոս-Այրեսից ժամանած «Սևան» նվա-
դախումբը: Կատարվել են պարեր Ա. Խաչա-
տրյանի «Գայանե» բալետից, բաղմաթիվ հայ-
կական երգեր ու պարեր, ներկայացվել է հայ-
կական հարսանիքը, որին մասնակցել են 80-ից
ավելի երգիչներ ու պարողներ:

(«Սևան», Բուենոս-Այրես)

* *

Բուենոս-Այրեսի հայ կենտրոնի սրահում
տեղի ունեցավ Շիրվանզադեի «Քառն» վեպի
հիման վրա ստեղծված պիեսի բեմադրությունը:
Ներկայացմանը մասնակցել են տեղի հայ թա-
տերասերները:

(«Սևան», Բուենոս-Այրես)

* *

Մոնտեվիդեոյում, արուզվահայ դպրոցի
բոլոր կազմակերպությունների մասնակցու-
թյամբ տեղի է ունեցել հանդիսավոր երեկո՝
նվիրված Զեյթունի հերոսական ապստամբու-
թյան 100-ամյակին: Երեկոյի համերգային
բաժնում հանդես են եկել «Ա. Խաչատրյան»,
«Արարատ» նվագախմբերը և «Գայանե» պարա-
խումբը:

Այդ նշանավոր տարեթիվին էր նվիրված
նաև Բրազիլիայի Սան-Պաուլո քաղաքի Զեյթու-
նի հայրենակցական միության կազմակերպած
առնակատարությունը, որը տեղի ունեցավ քա-
ղաքապետարանի թատրոնի սրահում: Բանա-
խոսություններից հետո կենդանի պատկերնե-
րով ներկայացվեց Զեյթունի հերոսամարտի
պատմությունը: Բեմադրությունն իրականացվել
էր Վ. Մինասյանի ջանքերով: Նման երեկոնե-
ր տեղի ունեցան նաև Բուենոս-Այրեսում և այլ
հայաբնակ վայրերում:

(«Սևան», Բուենոս-Այրես)

* *

Բուենոս-Այրեսում գործում է «Վերահան-
դիպում հայրենիքի հետ» հայկական ռադիո-
լսարանը, որը Լատինական Ամերիկայի հայու-
թյան համար շարաթական երկու անգամ կազ-
մակերպում է ռադիո-ժամեր: Վերջերս քաղաքի
հայ կենտրոնի սրահում տեղի է հայկական
ռադիո-լսարանի գոյություն 15 տարեդարձը:
Բեմադրվողական բաժնում հանդես են եկել հայ
և արգենտինացի կատարողները:

(«Սևան», Բուենոս-Այրես)

Սան-Պաուլոյում հայ գաղութի համար տեղի է ունեցել մեծ համերգ, որին մասնակցել են «Երևան» երիտասարդական նվագախումբը և հայկական պարերի շնորհալի կատարող Ռոզա Չարրջյանը: Համերգը կազմակերպել էր «Բրազիլիա-Լերմենիա» միությունը:

(«Սեան», Բուենոս-Այրես)

Ս. Գ. Ի. Ա.

Փարիզի «Լեյխարհ» թերթը տեղեկացնում է, որ Սրահորդի համալսարանի հրատարակչությունը անդրերևելագիտության է տեսել հայ նշանավոր գրող Վահան Թոթովենցի «Ելանրը հին հոռմեական ճանապարհի վրա» վեպը՝ «Պատկերներ հայկական մանկություն» խորագրով: Գիրքը հայերենից թարգմանել է Միշա Գյուլյանը:

Բուենոս-Այրեսում հրատարակվող «Սուրհանդակ» թերթը հայտնում է, որ Լոնդոնում անդրերևելագիտության վեպով հրատարակվել է Լ. Գուրնովի «Հայկական մանրանկարչություն» գիրքը:

Թիադալ Աւարական Ռեադալիկա

Կահիրեի օպերային թատրոնի շենքի սրահում աշխարհահռչակ կոմպոզիտորների արձանների շարքում վերջերս գրվել է Լեւոն Խաչատրյանի կիսանդրին:

(«Լեյխարհ», Փարիզ)

* * *

Եզրագրում լույս տեսան Լ. Սարգսյանի ծագրանկարների երկու ժողովածուները՝ «Լեւոն մեր ակնոցով» (200 ծագրանկար) և «Տես խորհրդ» (194 ծագրանկար՝ հայկական առաջվածքների թեմաներով) և Լույս է տեսել նաև Լ. Պարոնյանի «Լեւոնագրով մուրացկաններ»:

անվանի ծագրանկարչի պատկերազարդումներով (10 մեծադիր գունավոր և 20 միագույն նկարներ):

(«Լեւոն», Կահիրե)

Ի. Բ. Ա. Բ.

Բաղդադի Լեզգային միացյալ վարժարանի նախաձեռնությամբ հայ երիտասարդների ուժերով բեմադրվել է Երվանդ Ոսյանի «Չարչըր Լեյթին աղան» կատակերգությունը:

(«Քուրիս», Ստամբուլ)

Թ. Ն. Բ. Ի. Ա.

Գլխում տեղի են ունեցել հանդիսավոր հավաքներ՝ նվիրված «Պարտեզ» մանկական հանդեսի հիմնադրման 17-րդ տարեդարձին:

(«Քուրիս», Ստամբուլ)

Ի. Բ. Ա. Բ.

Ինչպես հաղորդում է Լեյթինում հրատարակվող «Երկիր» թերթը, մի խումբ թավրիղեցի հայեր նախաձեռնել են վերականգնել այն խաբլոված տունը, որտեղ ծնվել և ապրել է հայ մեծանուն վիպասան Բաֆֆին: Տունը վերականգնվելու է իր նախկին վիճակով և վեր է ածվելու մշտական այցելավայրի:

(«Երկիր», Լեյթին)

* * *

«Քուրիս» ամսագրի վկայությամբ Իրանի կինեմատոգրաֆիայում լավագույն բեմադրողի հռչակ է վայելում Սամվել Խաչիկյանը, որը 1962 թ. արժանացել է առաջին և երկրորդ կարգի մրցանակների:

(«Քուրիս», Ստամբուլ)

Վ. ԵՐԿԱՆՅԱՆ

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զեյթունի պատմագիր: Հրատարակություն Զեյթունի Հայրենակցական միության, Մոնտեվիդեո (Ուրուգվայ), Բուենոս-Այրես, տպարան «Լեւոնագր», 1960, 1150 էջ, նկարազարդ, մեկ րարակ:

Ժողովածուի առաջին մասում մանրամասն տեղեկություններ կան Զեյթունի անվան և նրա հիմնադրության մասին: Հետաքրքիր է «Զեյթունի անցյալից» բաժինը, որի մեջ ի մի են հավաքված հին և նոր ուսումնասիրություններ

19 հանդես, № 1

գավառի պատմության վերաբերյալ: Ընդարձակ հոդվածներ կան Զեյթունի 1862 թ. հերոսական ապստամբության վաղերի և ուսումնականների մասին: Գրքում կան ազգագրական հարուստ տեղեկություններ, նկարազարդված են զեյթունցիների տարազները, նրանց սովորությունները և զբաղմունքները: Ժողովածուում լայն տեղ է հատկացված Զեյթունի անցյալի վերաբերյալ նյութերին, որոնք տպագրված են եղել «Կոունկ Հայոց աշխարհին», «Լուսին», «Հա-

յաստան», «Բյուզանդիոն», «Մուրճ», «Փունջ», պարբերականներում, ինչպես նաև ֆրանսիական և անգլիական թերթերում: Ժողովածուի առաջին մասում ընդգրկված են՝ ընդարձակ մի հատված Ղ. Ալիշանի «Սիսուան» ուսումնասիրությունից և սովետահայ պատմաբան Վասպուր Մելիքսեթյանի «Զեյթունի 1862 թ. ապստամբությունը» աշխատությունը, որը լույս է տեսել «Հայաստանի պետական պատմական թանգարանի աշխատություններ»-ի երկրորդ հատորում (ԼՂ 193—278):

Ժողովածուի երկրորդ մասը հիմնականում նվիրված է Զեյթունին վերաբերող աշխարհագրական տեղեկություններին: Հայնորեն ներկայացված են Զեյթունի աշխարհագրական դիրքը, նրա բնությունը, կենդանական և բուսական աշխարհը, Զեյթունի նահանգի գյուղերը, նրանց կլիման և այլ նյութեր: Այնուհետև նկարագրված է նահանգի տնտեսական կյանքը, արհեստներն ու ալգեզործությունը:

Երրորդ մասն սկսվում է Հովհաննես Ա. հարոնյանի «Պատմություն Զեյթունի (1877—1915)» ծավալուն ուսումնասիրությամբ (ԼՂ 461—672): Հեղինակը, որ ծնվել և երկար տարիներ ապրել է Զեյթունում, պատմական տեղեկություններին զուգրթաց հաճախ տալիս է նաև իր հուշերը՝ հետաքրքիր մանրամասնություններով: Այս գլխում են գետեղված նաև օտար մամուլում 1895—1896 թթ. լույս տեսած լուրերը Թուրքիայի ներքին գրոթյան և հայթուրբական ընդհարումների մասին, ինչպես նաև կրոնական ճանապարհորդների գրքերից բաղված տեղեկություններ Զեյթունի վերաբերյալ:

Ժողովածուում գետեղված են գրական ստեղծագործություններ նվիրված Զեյթունին և զեյթունցիներին, առածներ և ասացվածքներ, կարճ պատմվածքներ, հուշեր, ինչպես նաև առանձին հոդվածներ («Զեյթունի բարբառ», «Աշուղները», «Բառարան Զեյթունի բարբառին»): Տեղեկություններ կան նաև Զեյթունի կրթական և մշակութային կյանքի մասին: Պատմագրքի վերջում գետեղված է Արևելյան Կիլիկիայի քարտեզը:

Գույումեյան Մեսրոպ Կ., Ընդառնակ բառարան անգլերեն, հայերեն: Կահիրե, տպարան Սահակ-Մեսրոպ, 1961, 1416 էջ, երկսյունակ, նկարազարդ:

«Ընդարձակ բառարան հայերեն անգլերեն» (Կահիրե, 1950) ծավալուն բառարանից հետո, սա հեղինակի երկրորդ լուրջ աշխատանքն է բառարանակազմության ասպարեզում: «Աշխատասիրողին գլխավոր նպատակը եղած է,—գրում է Գույումեյանը ներածության մեջ,—

պատրաստել գործ մը, որ ունենա այժմեական բնույթ: Թեև ոչ մեկ բառարան կրնա կատարյալ ըլլալ՝ սակայն այստեղ ամեն ճիշդ ի գործ դրված է այս աշխատասիրությունը դարձնելու այնքան ընդարձակ ու արդիական, որքան հնարավոր է: Հեղինակը չունի անսխալական ըլլալու հավակնությունը, և հավանական է սխալներ վրիպած ըլլան մանրակրկիտ բնութեթեման»:

Բառարանում ընդգրկված են նորակերտ բառեր, որոնք անգլերեն լեզվում սկսել են օգտագործվել XX դարի առաջին կեսում: Անգլերեն, հատկապես խոսակցական լեզվում օգտագործված, հատկաբանությունների իմաստը, բառերի ձգգրիտ թարգմանությունը և նախադասությունների նշանակությունը լրիվ և ստույգ բերանների դարձնելու նպատակով բառարանում մասնավոր ուշադրություն է դարձված հատկաբանություններին: Բառարանի վերջում կցված է թուրք նախադասություններ, ասացվածքներ, առածներ և մեջբերումներ՝ իրենց թարգմանություններով: Բառերը, որտեղ կան 600-ից ավելի ասացվածքներ և նախադասություններ լատիներեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն և հունարեն լեզուներով: Գիրքն ունի նաև համառոտագրությունների և օգտագործված հայերեն և անգլերեն լեզուներով բառարանների ցանկեր:

Ոսկյուն Համագուսպ, Գուգարբի վանքերը: Վիեննա, Մխիթարյան տպարան, 1960, 368 էջ, նկարազարդ (Ազգային Մատենադարան ՃԶԸ):

Այս գիրքը 1957—1959 թթ. «Հանդես ամսօրյայում» հայկական վանքերի մասին Հ. Ոսկյանի հրատարակած հոդվածների արտատպությունն է: Հեղինակը տեղեկություններ է տալիս Գուգարբի երեսունից ավելի վանքերի մասին, մանրամասն նկարագրում է վանքերը, նրանց արձանագրությունները:

Համեմատաբար հանգամանորեն են ուսումնասիրված Սանահինի կամ Ս. Աստվածածնի վանքը և Հաղբատի վանքը (ԼՂ 58—334): Այդ վանքերի մասին ընդհանուր տեղեկություններ տալուց հետո, հեղինակը զգալի տեղ է հատկացրել պատմագիրների և ժամանակագիրների տվյալներին, արձանագրություններին, ինչպես նաև Սանահինի վանքի առաջնորդների, զպրոցի, նրա կալվածքների և գույքերի նկարագրությանը: Գրքի վերջում գետեղված է հատուկ անունների այբբենական ցանկ (ԼՂ 335—365):

Թազպազյան Ժորժ, Բառարան արաբերեն հայերեն: Բեյրութ, տպարան Առլաս, 1960, 515 էջ, երկսյունակ:

Բառարանը լուսնագրվում է շուրջ 25 000 արարերին բառ նկատի ունենալով արարերին լեզվի դժվարությունները, բառարանում ընդգրկված բոլոր արարերին բառերը շեշտավորված են, նշանակված են նրանց հոմանիշները, հոգնակները և բայական ձևերը՝ Արմատական

բայերը ցույց են տրված աստղանիշներով, որոնցից հետո արված են ածանցումները՝ Բառարանում տպագրված է նաև համառոտագրությունների ցանկ՝ հայերեն և արարերին լեզուներով:

Հ. ՄԵՔԵՐՅԱՆ

3. ՀՈՒՇԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Անդրանիկ Անդրեասյան, Խոհեր (զրահան-հասարակական), Բեյրութ, հրատարակչություն «Անի», 1961, 258 էջ:

Գրքում ամփոփված են հեղինակի գրականագիտական ուսումնասիրություններն ու հոգվածները, ինչպես նաև ճանապարհորդական նոթերը: «Գաղութահայ գրականության մասին» հետազոտությունը նվիրված է 1920—1948 թթ. սփյուռքահայ գրականության զարգացման հարցերին: «Եզգային գրականության մեջ», «Գրական ներշնչումներու աղբյուրները» հոդվածներում հեղինակն անդրադառնում է գրական վարպետության խնդիրներին: «Խոհեր» գրքում գետնից է են հանում գրական-կենսագրական հակիրճ աշխատանքներ՝ նվիրված Մ. Խոհերնացուն, Խ. Աբովյանին, Հ. Թումանյանին, Վ. Տերյանին, Գ. Զոհրապին, Վ. Թեքեյանին և այլ դասական գրողների: «Գեղարվեստական» խորագրով ուղեգրությունը պատմում է 1936 թ. Սովետական Հայաստան հեղինակի կատարած առաջին այցելության մասին:

Հարություն Պարություն, Հուշեր Թումանյանին, Բեյրութ, տպ. Տոնիկյան, 1960, 290 էջ:

Գրքում կարելի է գտնել ազգագրական, պատմա-աշխարհագրական տեղեկություններ ու տվյալներ Կեսարիայի Թումարգա ավանի վերաբերյալ: Հուշերում զգալի տեղ է հատկացված Թումարգայում տարածում գտած տարազների, տնային իրերի, ինչպես նաև ազգաբնակչության սովորույթների, նիստուկացի, վանքերի, կրթական-կրոնական կյանքի նկարագրությանը:

«125 տարի ի սպաս ժողովրդական լուսավորության»: Պլուզիվի Ստեփան Շահումյանի անվան պետական հայկական դպրոցի հիմնադրման 125-ամյա հոբելյանին նվիրված ժողովածու (կազմեցին՝ Կ. Ասաճրյան, Ս. Համբարձումյան, Բ. Թյուֆենճյան), Սոֆիա, 1959, 64 էջ:

1959 թ. լրացավ Պլուզիվի հայկական դպրոցի հիմնադրման 125 տարին: Այդ հոբելյանը հանդիսացավ ամբողջ բուլղարահայ գա-
19*

ղութի մշակութային տոնը: Այս գիրք-ալբոմի մեջ հավաքված են դպրոցի պատմությունն ու ներկայի վերաբերող նյութեր, հոբելյանի առթիվ գրված հոդվածներ, հուշեր, յղջույնի ձևագրեր ու նամակներ, դպրոցի նախկին ուսուցիչների ու նշանավոր սաների անվանացանկեր, ինչպես նաև բազմաթիվ լուսանկարներ:

Գիրքը բացվում է Ստ. Շահումյանի ուսուցչին գործունեությանը նվիրված հոդվածով: Հուշեր է դպրոցի մանկապարտեզի (հիմնադրված 1894 թ.) վարիչ Մ. Քեշեկյանի «Կարմիր ծաղիկ» խորագրով հուշը, ուր պատկերված են մանկապարտեզի մոայլ անցյալը և պայծառ ներկան: Դպրոցի 1896 թ. շրջանավարտ, բուլղարական կոմպարտիայի աշակավոր գործիչ Ստեփան Շահումյանի կյանքին ու հերոսական գործունեությանը է նվիրված «Մեր պարծանքը» հոդվածը: Ստ. Շահումյանը հերոսի մահով զոհվել է 1923 թ. Անկախության ժողովրդական ապստամբության ժամանակ:

«Հեռավոր անցյալ» հոդվածը ընդգրկում է դպրոցի պատմությունը՝ հիմնադրման օրվանից (1834) մինչև 1878 թ.: Հոդվածում հետաքրքրական պատմա-ազգագրական տեղեկություններ կան Պլուզիվի հայ հին գաղութի մասին: Գրքույկը փակվում է սովետահայ արձակագիր, դպրոցի նախկին ուսուցիչ Հրանտ Հրահանի «Գաղափարական պայքարի և ազգային դաստիարակության միջնաբերդ» հոդվածով:

Ժամկոչյան Բ. Ա., Տպավորություններ միամյա շրջապատում, հրատարակություն Սահակյան բարձրագույն վարժարանի, Բեյրութ, 1958—1959, 470 էջ:

Գրքում ամփոփված են մանկավարժ Բենիամին Ժամկոչյանի ճանապարհորդական նոթերը 1956—1957 թթ. Հարավային Ամերիկայում կատարած շրջագայությունից: Ուշագրավ տվյալներ և տեղեկություններ կան Հատինական Ամերիկայի հայ գաղութների կրթական, մշակութային, ազգային-եկեղեցական կյանքի, հայրենակցական միությունների վերաբերյալ:

Ա. ԲԱՅՐԱՄՅԱՆ